

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 27-ի N 957-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐ ԿԱՄ
ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿ (ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔ)
ՆԵՐՄՈՒԾՈՂ ԵՎ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՄՆԱՑՈՐԴԻ ԵՎ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼՐԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղեր կամ բժշկական արտադրատեսակ (բժշկական նշանակության գույք) ներմուծող և կուտակման ու պահպանման պարտավորություն ունեցող կազմակերպությունների կողմից ներկայացվող ռազմավարական պաշարներ հանդիսացող ապրանքների մնացորդի և շարժի վերաբերյալ հաշվետվությունների լրացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառված հասկացությունները գործածվում են «Նյութական պահուստի մասին» օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Ռազմավարական պաշարների պահուստի անվանացանկում ընդգրկված դեղերի և բժշկական արտադրատեսակի (բժշկական նշանակության գույքի) հաշվապահական հաշվառումն իրականացվում է այդ դեղերի և բժշկական արտադրատեսակի (բժշկական նշանակության գույքի) սեփականատեր հանդիսացող կազմակերպությունների կողմից և ներառվում է տվյալ կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

4. Կազմակերպություններն ընթացիկ տարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 15-ը լիազոր մարմին են ներկայացնում հաշվետվություն կուտակված ռազմավարական պաշարներ հանդիսացող դեղերի և բժշկական արտադրատեսակի (բժշկական նշանակության գույքի) մնացորդի և շարժի վերաբերյալ՝ համաձայն ձևի:

5. Ռազմավարական պաշարներ հանդիսացող դեղերի և բժշկական արտադրատեսակի (բժշկական նշանակության գույքի) հաշվառումը վարում է լիազոր մարմինը:

6. Լիազոր մարմինն ընթացիկ տարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ռազմավարական պաշարներ հանդիսացող դեղերի և բժշկական արտադրատեսակի (բժշկական նշանակության գույքի) առկայության ու վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա ավարտը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն:

7. Ձևով սահմանված հաշվետվությունը լրացվում է հետևյալ կարգով՝

1) հաշվետվության սկզբում, «(դեղ և/կամ բժշկական արտադրատեսակ (բժշկական նշանակության գույք) ներմուծող կազմակերպության անվանումը)» տողի վրա, լրացվում է կազմակերպության լրիվ անվանումը, իսկ «(ժամանակահատված)» տողի վրա՝ ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածը.

2) հաշվետվության աղյուսակում և սյունակներում լրացվում է դեղերի և/կամ բժշկական արտադրատեսակի (բժշկական նշանակության գույքի), ըստ աղյուսակի, պահանջվող տեղեկատվությունը.

3) հաշվետվությունն ստորագրվում է կազմակերպության ղեկավարի (գլխավոր տնօրենի կամ տնօրենի) և հաշվապահի կողմից ու կնքվում կազմակերպության կնիքով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

(պաշտոնը, ստորագրությունը)

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

(ստորագրությունը)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ